ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5
N PDU-200-01-26 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

<< 04 >>. << 06 >>. **2026թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Տ. Ենոքյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայփոստ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանի, հիմք ընդունելով 05.03.2026 թվականին կնքված **PDU-200-01-26** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **PDU-200-01-26** ծածկագրով գնման պայմանագրի 3.3 կետով սահմանված **242 000 000** (երկու հարյուր քառասուներկու միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել ևս **181 000 000** (մեկ հարյուր ութսունմեկ միլիոն) ՀՀ դրամ, որը կհատկացվի որպես կանխավճար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 5-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2026թ. մայիսի 14-ի թիվ 661-Ն որոշումը: Վճարումը «Պատվիրատու»-ի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՏԱՐՈՂ»
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**«Հայփոստ» ՓԲԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**ք. Երևան 0061,Արշակունյաց 65/5**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
գործառնական վարչություն	***Հ/Հ՝ 1930003703156000***
Հ/Հ՝ 900011042471	***ՀՎՀՀ՝ 02507464***
ՀՎՀՀ՝ 02882913	**Հեռ. 010 54-44-44**
Հեռ. 010 59-61-52	**Էլ. Փոստ: business@haypost.am**
Էլ. հասցե: gnumner@mia.gov.am	
_____ Տ.Ենոքյան	**_____ Շ. Ալեքսանյան**
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/	**/«Հայփոստ» ՓԲԸ**
(ստորագրություն)	**Գլխավոր գործադիր տնօրեն/**
Կ.Տ	**(ստորագրություն)**
	Կ.Տ

Հավելված N 1
<<04>> 06.2026թ.
PDU-200-01-26 ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64111200/2	Փոստային ծառայություններ՝ կապված նամակների հետ						181 000 000	181 000 000	181 000 000	181 000 000	181 000 000	181 000 000	181 000 000	**181 000 000**

«Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ»
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
էլ. հասցե՝ gnumner@mia.gov.am

Տ. Ենոքյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

«Կ Ա Տ Ա Ր Ո Ղ»
«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան 0061,Արշակունյաց 65/5
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
ՀՎՀՀ՝ 02507464
Հեռ. 010 54-44-44
էլ. Փոստ: business@haypost.am

Շ. Ալեքսանյան
/ «Հայփոստ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ